ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

12.08.2019
342-70

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար Սուրեն Պապիկյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պապիկյան,

2019 թվականի հուլիսի 23-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) դիմել էր Ձեր ղեկավարած գերատեսչություն՝ խնդրելով տեղեկացնել, թե ինչ փուլում է գտնվում Արագած լեռան ստորոտին, Քարե լճի ափին տեղակայված ռեստորանային համալիրի տարածքի անօրինական պարսպի քանդման հարցը: Տեղեկություն ստանալու հարցմանն ի պատասխան ՏԿԵՆ-ն 2019 թվականի օգոստոսի 1-ին ուղարկել էր Արագածոտնի մարզպետարանի և Ուշիի համայնքապետարանի պատասխանները վերոհիշյալ հարցի վերաբերյալ:

Պատասխան գրության մեջ նշված էր, որ «Համայնքի ղեկավարի կողմից 07.11.2018 թ-ին ընդունվել է «Ալագյազ սար» ՍՊԸ-ին պատկանող հողամասի վրա կառուցված ինքնակամ պարսպի օրինական ճանաչելու մասին N125 որոշումը, որով «Ալագյազ սար» ՍՊԸ-ին պատկանող հողամասում կառուցված ինքնակամ պարիսպը ճանաչվել է օրինական և կառուցապատողի կողմից օրենքով սահմանված վճարները կատարելուց հետո ստացել է իրավունքի պետական գրանցում, իսկ այն մասը, որը դուրս է գտնվել ընկերությանը պատկանող հողամասի սահմաններից, քանդվել է կառուցապատողի կողմից» (file:///C:/Users/FOI/Downloads/342-67-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AD%D5%A1%D5%B61.pdf):

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք պարսպի քանդման մասին տրամադրել ավելի մանրամասն տեղեկություն՝ հստակ նշելով, թե քանի մետր քառակուսի պարիսպ է քանդվել, կոնկրետ որ հատվածում և հնարավորության դեպքում տրամադրեք քանդման փաստն արձանագրող լուսանկար(ներ):

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝ ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան